

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2013 թվականի դեկտեմբերի 10-ին Նոր Խարբերղի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, նրաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչներ:

ԼՄԵՅԻՆ- Արարատի մարզի Նոր Խարբերղ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2013 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՅ, որ

2013 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ Նոր Խարբերղի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 462 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 7000 տեղեկանք, ստացել 143 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2013 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Ծաբայթը նրկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազրման, սահմանների ճշտզրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել թունաքիմիկատներ, սերմացուներ:

2013 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ համայնքի բյուջեի սեփական նկատուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 2876.4 հազար դրամ.

բ/ գույքահարկ՝ 9831.2 հազար դրամ.

գ/ տեղական տուրք՝ 2001.9 հազար դրամ.

դ/ ոչ հարկային նկատուտներ՝ 1764.4 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

Հանդիսատիությունը նշվել են Բանակի, Կանանց, Աշխատանքի, Հաղթանակի և խաղաղության, Հանրապետության, Սահմանադրության և Անկախության օրերը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2515.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն.

Հուղարկավորության նպատակով՝ 2800.0 հազար դրամ.

Համայնքում նախատարրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 22550.0 հազար դրամ.

Երաժշտական դպրոցին՝ 13750.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 7429.0 հազար դրամ.

Բարեկարգվել, մասնակի ասֆալտապատվել և նորոգվել են համայնքի կենտրոնական, «Չոնալ» և նորակառույց թաղամասերի փողոցները:

Ծահագործման է հանձնվել համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի շենքը:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղատնտեսության ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակայանների տեղադրումը:

Մինչև տարեվերջ այլ աշխատանքներ չեն կատարվելու:

ՀԱՄԱՅՆ



Կ. ԿԱԿՈՅԱՆ